

Բանալի բառեր՝ գյուղատնտեսություն, գյուղատնտեսական ռիսկեր, կոռուպցիայի գործակից, բնական աղետներ, ապապահովագրություն:

ՀՏԴ 338.43

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՌԻՍԿԵՐԻ ՄԵՂՄԱՆ ԱՆՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՍ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության թեմա՝
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ռիսկերի մեղմման պետական քաղաքականության հիմնական ուղիները

Հրաչյա ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀԱԱՀ ԱԴՀ Էկոնոմիկայի ամբիոնի հայրորդ

Գիտական դեկավար՝
Հրաչյա ԾՊՆԵՑՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր

Ագրոպարենային ոլորտում շուկայական վերափոխումները պայմանավորել են մի շարք հրատապ խնդիրների առկայությունը, որոնց լուծումից կախված է ճյուղի հաշվեկշռված և կայուն զարգացումը: Շուկայական հարաբերությունների պայմաններում գյուղատնտեսության կայուն գործունեության համար առանձնակի նշանակություն է ստանում գյուղատնտեսական ռիսկերին կառավարման հարցերը, որը մեծապես կապված է տարբեր բնական, սոցիալ-տնտեսական պայմաններից, որոնք կանխորոշում են ագրոպարենային ոլորտի զարգացումը:

Ագրարային ոլորտը հանդիսանում է առավել ռիսկային ճյուղ: Գյուղատնտեսական արտադրության ռիսկի պատճառը հանդիսանում է ժամանակային մեծ խզումը սկզբնական ծախսերի ներդրման մեկնարկի և արտադրանքի թողարկման միջև: Ժամանակի գործոնը հանգեցնում է շուկայական ռիսկերի ուժեղացմանը, որը մեծապես պայմանավորված է պարենային շուկայում գների բարձր առանձգականությամբ: Գործնականում ամբողջ աշխարհում գյուղատնտեսական արտադրության վարումը ռիսկի պայմաններում հանդիսանում է օրինաչափ գործընթաց: Տնտեսության ագրարային ոլորտի շուկայական հարաբերությունները սրում է հակասությունը գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացի և ռիսկերի կառավարման ոլորտում որոշումների կայացման արդյունավետության միջև: Բազմաթիվ կառավարչական որոշումներ անհրաժեշտ է իրականացնել նվազեցնելով ոչ միայն բնական, այլև տնտեսական ռիսկերը:

Գյուղատնտեսական արտադրության զարգացումը տնտեսավարման ներկայիս պայմաններում պահաջում է կորուստների, զարգացման վրա էական ազդեցություն ունեցող հետևյալ ռիսկերի հաշվառում՝

- գյուղատնտեսական միավոր հողատարածության հաշվով գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար ծախսերի գումարի ավելացման ռիսկը,
- գյուղատնտեսական միավոր հողատարածության հաշվով գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող հասույթի նվազման ռիսկը:

Գյուղատնտեսական արտադրության համար բնորոշ է բոլոր տեսակի տնտեսական ռիսկերը, ներկայիս պայմաններում, առավել արդիական է համարվում նաև տնտեսական ռիսկը: Այն ծագում է տնտեսական գործունեության գործընթացում և կապված է ռեսուրսների հնարավոր կորստի, ինչպես նաև եկամուտների ոչ լիարժեք ստացման հետ:

Անբարենպաստ բնակլիմայական պայմանները հանդիսանում են գյուղատնտեսական արտադրության ռիսկի աղբյուր, առաջին հերթին արտահայտվելով մշակաբույսերի բերքատվության և գյուղատնտեսական արտադրանքի ծավալի տատանումներով: Այս դեպքում եղանակային ռիսկերը հավելվում է տնտեսականին, որը բարդացնում է դրա բացահայտումը և վերլուծությունը: Գյուղատնտեսությունում իհայտ են գալիս առանձնահատուկ ռիսկեր, որոնք կապված են գյուղատնտեսական հողերի և բույսերի ու գյուղատնտեսական կենդանիների կենսագործունեության հետ որպես աշխատանքի հիմնական օբյեկտ: Միասին անդրադառնում են տնտեսության մասնագիտացման, ռեսուրսների ծախսերի հարաբերակցության և արտադրության միջոցների վրա:

Կառավարչական որոշումների ընդունման արդյունավետության բարձրացման համար կարևոր է մշակել անորոշության և ռիսկի պայմաններում տնտեսավարման միջոցառումներ: Շուկայական հարաբերությունների պայմաններում ռիսկերի մակարդակի նվազեցումը և անորոշության հաղթահարումը գյուղատնտեսական արտադրությունում կապված է կառավարման, կանխատեսման և ծրագրավորման օպիմալ ձևերի կիրառման հետ:

Գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկությունները, տնտեսական և բնակլիմայական գործոններով դրսևորվող գյուղատնտեսության ոլորտի կորուստները պայմանավորում են ոլորտի ռիսկերի մեղմման անհրաժեշտությունը: Նշված առանձնահատկությունները ընդհանուր գծերով հետևյալն են՝

- գյուղատնտեսության գլխավոր և առանձնահատուկ արտադրության միջոցը հողն է: Արտադրության արդյունքները կախված են հողի որակից, նրա բերրիությունից, տեղադիրքից, հետևաբար տարբեր տարածքներում հավասարաչափ աշխատանքային և նյութական ծախսերի արդյունքները կարող են լինել ոչ միատեսակ,

• որպես արտադրության յուրահատուկ միջոց գյուղատնտեսությունում հանդես են գալիս կենդանի օրգանիզմները՝ բույսերը և կենդանիները: Դրա հետևանքով գյուղատնտեսության զարգացման գործընթացում սերտորեն զուգակցվում են վերարտադրության կենսաբանական և տնտեսական օրենքները,

• գյուղատնտեսությունում արտադրանքը տարվա ընթացքում հաճախ ստացվում է մեկ կամ երկու անգամ կամ որոշակի միջանկյալ ժամանակահատվածներով,

• գյուղատնտեսությունը մեծ կախվածություն ունի բնակլիմայական պայմաններից, որոնք դեռևս դժվար է կառավարել,

• գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումն ունի խիստ արտահայտված սեզոնային բնույթ,

• գյուղատնտեսությունը հանդիսանում է տնտեսության ամենառիսկային ոլորտներից, որտեղ տարերային աղետների, անկանխատեսելի դեպքերի հետևանքով պատճառված վնասները հասնում են մեծ չափերի: 1

Վերը հիշատակված առանձնահատկություններն առավել խոցելի են դարձնում գյուղատնտեսության ոլորտի գործունեությունը՝ պայմանավորված բնակլիմայական և տնտեսական գործոններով: Այսինքն ոլորտը դառնում է բարձր ռիսկային, որի պայմաններում արտադրության կայունության ու արդյունավետության ապահովումը անհնար է առանց այդ ռիսկերի կառավարման քայլերի ձեռնարկման: Վրջիններս կարող են բացառել կամ տարբեր աստիճանով մեղմել հնարավոր ռիսկերը:

ՀՀ գյուղատնտեսության բարձր ռիսկայնության մասին են վկայում նույնիսկ միայն բնակլիմայական գործոններով պայմանավորված ոլորտի կորուստների չափը և դրանց համադրումը գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի հետ (աղյուսակ 1): Հաշվառված կորուստները ամբողջական չեն, քանի որ հաշվառումը հիմնականում իրականացվում է կարկտահարության, ցրտահարության էական կորուստներ գրանցած տարիներին, այն էլ հիմնականում վնաս կրած մարզերում ոչ մեծ չափի վնաս կրած մարզերում գրեթե վնասների հաշվառում չի իրականացվում: Բացի այդ չի հաշվառված նաև այլ բնույթի ռիսկերից վնասները, մասնավորապես՝ տնտեսական բնույթի վնասները (գների տատանումներ, ռեսուրսների մատակարարման և իրացման դժվարություններ և այլն): Այստեղ գրեթե հաշվառված չեն նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների հիվանդություններից կորուստները:

Աղյուսակ 1.

ՀՀ գյուղատնտեսության հաշվառված կորուստները և գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի և տնտեսական աճի փոփոխությունները ըստ ճյուղերի 1995-2016թթ. 2, 3, 4

Տարեթվերը	Հաշվառված վնասը, մլրդ դրամ	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլրդ դրամ	այդ թվում՝		Տնտեսական աճը, %	այդ թվում՝		Վնասի տեսակարար կշիռը բուսաբուծության համախառն արտադրանքի արժեքում, %
			բուսաբուծություն	անասնաբուծություն		բուսաբուծություն	անասնաբուծություն	
1	2	3	4	5	6	7	8	9
1995	17.0	333.0	228.0	105.0	104.7	112.3	91.3	7.5
1996	12.59	342.7	194.7	148.0	101.8	102.6	100.0	6.5
1997	26.53	355.8	194.0	161.8	94.1	88.0	107.6	13.7
1998	14.95	402.1	245.6	156.5	113.1	116.5	107.1	6.1
1999	11.33	311.7	180.0	131.7	101.3	99.2	105.5	6.3
2000	59.78	281.2	136.2	145.0	97.5	91.6	108.4	43.9
2001	23.94	351.0	208.0	143.0	111.6	119.0	102.3	11.5
2002	15.14	377.6	226.6	151.0	104.4	104.6	104.2	6.7
2003	82.63	410.1	228.7	181.4	104.3	104.4	104.3	36.1
2004	5.17	504.1	283.9	220.2	114.5	120.1	108.0	1.8
2005	2.48	493.0	288.0	205.0	111.2	114.9	106.4	0.9
2006	5.60	555.9	356.2	199.7	100.4	95.6	110.4	1.6
1	2	3	4	5	6	7	8	9
2007	12.63	633.9	429.9	204.0	109.6	112.3	104.3	2.9
2008	0.073	628.1	405.9	222.2	101.3	100.3	103.2	0.02
2009	11.89	552.1	346.7	205.4	99.5	99.7	99.1	3.4
2010	35.50	636.7	392.7	244.0	86.4	79.7	100.0	9.0
2011	0.91	795.0	465.1	329.9	113.9	126.6	100.0	0.2
2012	0.49	841.5	516.0	325.5	109.5	114.8	102.1	0.1
2013	25.30	919.1	572.8	346.3	107.1	106.5	107.9	4.4
2014	17.90	983.0	595.2	387.8	106.3	105.4	107.8	3.0
2015	7.80	945.4	550.0	395.4	108.4	109.9	106.0	1.4
2016	33.6	878.5	486.7	391.8	96.2	89.4	105.5	6.9

Գյուղատնտեսության ոլորտի հաշվառված վնասի դիմամիկային համապատասխան տնտեսական աճի, ըստ ճյուղերի դրանց մակարդակի և բուսաբուծության ճյուղի համախառն արտադրանքի նկատմամբ վնասի տեսակարար կշիռի դիտարկումները ցույց են տալիս, որ վնասը իր ազդեցությունն է ունեցել ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ բուսաբուծության համախառն արտադրանքի, այնպես էլ դրանց տնտեսական աճի վրա: Պատճառված վնասի բանական ազդեցության գնահատման համար փորձ ենք արել կատարել համապատասխան գործոնային վերլուծություն:

Տվյալ դեպքում փորձել ենք սկզբում բացահայտել հաշվառված վնասի և գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի միջև կապի բնույթը:

Որպես արդյունքային հատկանիշ դիտարկել ենք գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը (նշանակում ենք y_i -ով, վրոդ դրամ), գործոն հատկանիշն ընդունում ենք հաշվառված վնասի մեծությունը (նշանակում ենք x_i -ով, վրոդ դրամ): Ելակետային տվյալները առկա են 1-ին աղյուսակում:

<<Մեկ կամ այլ փոփոխականների շեղումը միջինից ընկած է կոռելացիոն կապի գնահատման հիմքում: Գծային կապի դեպքում նրա սերտությունը չափվում է զույգային կոռելացիայի գործակցով, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$r_{xy} = \frac{\sum_i (x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{\sqrt{\sum_i (x_i - \bar{x})^2 \sum_i (y_i - \bar{y})^2}} \quad (1)$$

Եթե միջինից շեղման նշանը համընկնում է, այդ դեպքում կապը ուղիղ է ($r_{xy} > 0$), եթե շեղման նշանը չի համընկնում ապա

կապը հակադարձ է ($r_{xy} < 0$):

Չույգային կոռելացիայի գործակիցը չափվում է -1-ից (պատահական լրիվ հակադարձ կապ) մինչև 1 (լիարժեք ուղակի

կապի դեպքում): Բացարձակ մեծությամբ՝ $0 \leq |r_{xy}| \leq 1$: Որքան մոտիկ է r_{xy} նշանակությունը միավորին, այնքան կապը

սերտ է, որքան մոտիկ է r_{xy} նշանակությունը 0-ին, ապա կապը թույլ է: Երբ $|r_{xy}| < 0.30$ -ից կապը համարվում է թույլ է, $|r_{xy}|$

$= 0.3 \div 0.7$ կապը համարվում է միջին, իսկ երբ $|r_{xy}| > 0.7$ կապը համարվում է ուժեղ կամ սերտ>>: 5

Չիմք ունենալով 1-ին աղյուսակի տվյալները, հաշվարկել ենք զույգային կոռելացիայի գործակիցը գյուղատնտեսությանն պատճառված հաշվառված վնասի չափի և գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի միջև (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

ԳՅ գյուղատնտեսության պատճառված վնասի չափի և գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի միջև զույգային կոռելացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ

Տարեթվերը	$x_i - \bar{x}$	$y_i - \bar{y}$	$(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$	$(x_i - \bar{x})^2$	$(y_i - \bar{y})^2$
1	2	3	4	5	6
1995	-2.238	-236.614	529.509	5.008	55986.013
1996	-6.648	-226.914	1508.491	44.194	51489.798
1997	7.292	-213.814	-1559.158	53.175	45716.271
1998	-4.288	-167.514	718.276	18.386	28060.818
1999	-7.908	-257.914	2039.546	62.534	66519.444
2000	40.542	-288.414	-11692.905	1643.665	83182.426
2001	4.702	-218.614	-1027.951	22.110	47791.922
2002	-4.098	-192.014	786.846	16.792	36869.237
2003	63.392	-159.514	-10111.910	4018.563	25444.600
2004	-14.068	-65.514	921.637	197.905	4292.037
2005	-16.758	-76.614	1283.881	280.826	5869.649
1	2	3	4	5	6
2006	-13.638	-13.714	187.025	185.991	188.064
2007	-6.608	64.286	-424.796	43.664	4132.737
2008	-19.165	58.486	-1120.883	367.292	3420.655
2009	-7.348	-17.514	128.688	53.991	306.727
2010	16.262	67.086	1090.968	264.457	4500.580
2011	-18.328	225.386	-4130.851	335.911	50799.013
2012	-18.748	271.886	-5097.288	351.482	73922.195
2013	6.062	349.486	2118.634	36.749	122140.718
2014	-1.338	413.386	-553.055	1.790	170888.286
2015	-11.438	375.786	-4298.193	130.825	141215.391
2016	14.362	308.886	4436.268	206.271	95410.786
Σ	x	x	-24267.223	8341.582	1118147.366

Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելացիայի գործակցի բանաձևի մեջ ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{-24267.223}{\sqrt{8341.582 * 1118147.366}} = \frac{-24267.223}{96577.005} = -0.251$$

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար գյուղատնտեսության ոլորտի գրանցված վնասի և գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի միջև կապը հակադարձ և թույլ է (այն գտնվում է $0 \div -0.3$):

Կոռելացիայի գործակցի բառակուսին իրենից ներկայացնում է դետերմինացիայի գործակիցը՝ 5

Դետերմինացիայի գործակիցը = r^2 (2)

Դետերմինացիայի գործակիցը առավել նախընտրելի է կապերի գնահատման համար: Այն կարող է արտահայտվել տոկոսներով: Դրա արժեքը մեր օրինակի համար կազմում է՝ $r^2=0.063$ կամ 6.3 %: Դետերմինացիայի գործակիցը ունի 0÷1 արժեք և տվյալ դեպքում այն ցույց է տալիս, որ հանրապետությունում գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի կրճատումը 6.3 %-ով պայմանավորված է վնասի չափի ավելացմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը վնասները հիմնականում ստանում է բուսաբուծության ճյուղը, հետևաբար կիրառելով միևնույն մեթոդական մոտեցումը և գնահատվել է արտադրողների կողմից վնասի չափի ազդեցությունը բուսաբուծության համախառն արտադրանքի արժեքի վրա:

Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելացիայի գործակցի բանաձևի մեջ ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{-18079.229}{\sqrt{8341.582 * 426501.806}} = \frac{-18078.229}{59646.456} = -0.303$$

Ստացված գործակիցը ցույց է տալիս, որ կապը նույնպես հակադարձ և միջին է՝ թույլին մոտ, իսկ դետերմինացիայի գործակիցը ստացվում է 0.092 կամ 9.1 %: Այն ցույց է տալիս, որ հանրապետությունում բուսաբուծության ճյուղի համախառն արտադրանքի արժեքի կրճատումը 9.2 %-ով պայմանավորված է վնասի չափի ավելացմամբ:

Նույն մեթոդական մոտեցմամբ ելակետ ունենալով 1.2.1 աղյուսակի տվյալները գնահատվել է նաև վնասի չափի ազդեցությունը ինչպես գյուղատնտեսության, այնպես էլ բուսաբուծության ճյուղի տնտեսական աճի վրա: Այս դեպքում կոռելացիայի գործակիցները համապատասխանաբար կազմել են՝ -0.396 և -0.423, այսինքն գյուղատնտեսության և բուսաբուծության ճյուղի տնտեսական աճի նվազման վրա վնասի չափի ազդեցությունը եղել է միջին (այն գտնվում է -0.3÷-0.7 միջակայքում): Դետերմինացիայի գործակիցները համապատասխանաբար կազմել են 0.157 և 0.179, գյուղատնտեսության տնտեսական աճի նվազման 15.7 %-ը, իսկ բուսաբուծության ճյուղի տնտեսական աճի նվազման 17.9 %-ը պայմանավորված է վնասի գործոնով:

Ներկայացված հաշվարկի արդյունքները վկայում են գյուղատնտեսության ռիսկերի, գլխավորապես բնակլիմայական ռիսկերի գյուղատնտեսության համախառն արտադրանքի և տնտեսական աճի վրա էական ազդեցության մասին: Հիշատակվածը առավել ընդգծում է գյուղատնտեսության ռիսկերի մեղմման անհրաժեշտությունը:

Ռիսկերի կառավարման մեթոդը պետք է ընտրվի կոնկրետ դեպքի համար: Անհրաժեշտ է ոչ միայն հիմնավորված ձևով առանձնացնել ռիսկը, այլ ճիշտ գնահատել և գտնել ռիսկի կառավարման օպտիմալ մեթոդը, մոտեցումը: Ռիսկերի կառավարումը դա իրավիճակի վերլուծությունն է, ռիսկի նվազեցմանը ուղղված կառավարչական որոշման մշակում և հիմնավորում:

Տնտեսական ռիսկի նվազեցմանը ուղղված աշխատանքները չպետք է սահմանափակվեն միայն դրանց գնահատմամբ: Անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել ռիսկերի մեղմման գործնական քայլերի ուղղությամբ առաջարկությունների մշակմանը, որոնք հնարավորություն կտան նվազեցնելու գյուղատնտեսությունում տնտեսավարողների ռիսկերը, բարձրացնել դրա կայունությունը շուկայական տնտեսության պայմաններում: Տնտեսության կոնկրետ պայմաններում ռիսկի տարբեր գործոնների բազմազանության դեպքում կարող է կիրառվել ռիսկի մեղմման տարբեր մեթոդներ և մոտեցումներ:

Այսպես, օրինակ բուսաբուծությունում ռիսկերի նվազեցումը իրականացվում է պաշտպանության կենսաբանական մեթոդներով, այսպես օգտագործելով գյուղատնտեսական կուլտուրաներ որոնք կայուն են երաշտի, ցրտահարության նկատմամբ: Մելեկցիան ինտրավորություն է և տալիս ստեղծել այնպիսի սորտեր որոնք ուշ են ծաղկում, որոնք հնարավորություն են տալիս խուսափել վաղ գարնանային ցրտահարություններից, ինչպես նաև նվազեցնել ծախսերը կապված մի շարք ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման հետ, որը պահանջում է իրականացնել ցածր ջերմաստիճանների պայմաններում:

Համաշխարհային լավագույն փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գյուղատնտեսության բնագավառում առկա են ռիսկերի կառավարման հետևյալ մեթոդները. 1

• գյուղացիական տնտեսության գեաղվողների կողմից ոչ գյուղատնտեսական ապրանքների վաճառքից ստացված այլ եկամուտների աղբյուրների ստեղծում,

- գյուղատնտեսական արտադրանքի դիվերսիֆիկացում,
- ֆինանսական հավելյալ միջոցների ձևավորում,
- շուկայավարման քաղաքականության մշակում և իրականացում,
- ֆորվարդային գնանշում կամ ֆյուչերսային կամ օպցիոն պայմանագրերի կնքում,
- լիզինգային պայմանագրերի կնքում,
- այլ պայմանագրերի կնքում,
- ագրոպահովագրության իրականացում, որը ներառում է գյուղացիական տնտեսությունների բերքի

համապատասխանաբար նաև եկամուտների չստացման ապահովագրությունը, գյուղատնտեսական կենդանիների, ինչպես նաև շենքերի և շինությունների ապահովագրությունը:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները, զարգացման ներկայիս մակարդակը պահանջում է ռիսկերի մեղմման հետևյալ մոտեցումների և մեթոդների կիրառումը:

Կարևոր է համարվում գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ, երաշտադիմացկուն, ցրտադիմացկուն սերմերի կիրառումը: Վերջինս պահանջում է գյուղատնտեսական մշակաբույսերի առաջնային սերմնաբուծության, բարձրորակ սերմերի մատչելի պայմաններով մատակարարման պետական ծրագրերի իրականացումը:

Հանրապետությունում բուսասանիտարական կայուն վիճակի ապահովման, բուսասանիտարական ռիսկի նվազեցման համար կարևոր է համարվում բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների պետական կենտրոնացված ծրագրերի իրականացումը, որի համար հիմք պետք է ծառայի բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքները:

Կայուն անասնահամաճարակային վիճակի ապահովումը պահանջում է գյուղատնտեսական կենդանիների և մարդկանց համար առավել վտանգավոր հիվանդությունների դեմ կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների իրականացումը, որի համար ելակետ պետք է հանդիսանա հանրապետության ամբողջ տարածքում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների տարածման գոտու և բնույթի մոնիթորինգի արդյունքները:

Հաշվի առնելով գյուղատնտեսության վրա բնական աղետների հետևանքով պատճառված փաստացի վնասները առանձնակի կարևորվում է բնական աղետների դեմ պայքարի մեթոդների կիրառումը: Այսպես կարկուտի դեմ պայքարի համար կարևորվում է հակակարկուտային արդյունավետ տեխնոլոգիաների ներդրումը և դրանց շահագործման գործուն

մեխանիզմների կիրառումը: Այս ուղղությամբ կարևոր է համարվում կարկուտի դեմ պայթարի հրթիռային մեթոդի կիրառումը, որի արդյունավետությունը հասնում է ավելի քան 80 %-ի: Այս մեթոդի փոձնական փուլը ներդրվել է՝ 3 հրթիռային կայան, որը հնարավորություն ունի հակակարկուտային պաշտպանության տակ վերցնել ավելի քան 45.0 հազ. հա տարածք: Նախատեսվում է համակարգի ամբողջական ներդրում հանրապետությունում: Կարևորվում հակակարկուտային ցանցերի կիրառման աջակցությունը, այս ուղղությամբ հանրապետությունում 2018թ. մեկնարկել է պետական աջակցության ծրագիր: Սակավաջրության դեմ պայթարին է ուղղված կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման աջակցությունը, այս ուղղությամբ նույնպես 2018թ. մեկնարկել է պետական աջակցության ծրագիր:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական ռիսկերի հետևանքների մեղմման համար առանձնակի կարևորվում է ոլորտում ապահովագրական համակարգի ներդրումը: Այս ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են՝ Գերմանական զարգացման KFW բանկի աջակցությամբ Նախաձեռնվել է հանրապետության բուսաբուծության ճյուղում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացումը: Նախատեսված է ծրագիրը միջազգային փորձագետների աջակցությամբ մեկնարկել 2019 թվականից: Ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել տարեկան 885.0 մլն դրամ, որը գլխավորապես պետք է ուղղվի ապահովագրավճարների սուբսիդավորմանը:

Հանրապետության գյուղատնտեսությունում ռիսկերի մեղմման առումով կարևորվում ոլորտի խորհրդատվության բարելավումը՝ խորհրդատվության օպերատիվություն և կիրառվող մեխանիզմների կատարելագործման միջոցով:

Գյուղատնտեսական ռիսկերի մեղմմանը, մասնավորապես կարևորագույն ռեսուրսների գների բարձրացման, վարկերի տոկոսադրույքների բարձրացման, գյուղատնտեսական մթերքների մթերումների ռիսկերի մեղմման և ուղղվում մի շարք պետական ծրագրեր, մասնավորապես հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութ շուկայականից ցածր գներով մատակարարման, ագրովերամշակող ոլորտին մթերումների համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման և այլն:

Օգտագործված կոլթեր

1. Ս. Ավետիսյան, Հ. Ծախեցյան, Ա. Դադունց, Ա. Վարդանյան Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում/ Եր.: Տնտեսագետ, («Ամբերդ» մատենաշար), 2016.- էջ 11-12, 16-17
2. Բնակլիմայական աղետներից գյուղատնտեսությանը հասցվող վնասների կանխարգելման հայեցակարգ: Հավանության և արժանացել ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի N15 արձանագրային որոշմամբ: էջ 5 -6
3. Կլիմայի ռիսկերի կառավարումը Հայաստանում: Երկրի հաշվետվություն, Հայաստան: Դեկտեմբեր 2013թ., էջ 30
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995-1996թթ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 1998թ. էջ 14, 256: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 1995-1998թթ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 2001թ. էջ 18, 263, 265: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2001թ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 2001թ. էջ 18, 280, 282: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2002թ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 2002թ. էջ 36, 224, 226: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2003թ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 2003թ. էջ 18, 324, 326: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2004թ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 2004թ. էջ 18, 300, 302: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008թ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 2008թ. էջ 18, 275, 276: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012թ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 2012թ. էջ 19, 291: Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017թ.: ՀՀ ԱՎԾ: Երևան 2017թ. էջ 18, 299
5. Статистика: у+ев. /И.И. Елисеева и др. под. ред И.И. Елисеевой. –М.: Проспект, 2010, с. 78-81

Ներկայացվել է 23.01.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.